

ՀՀ ԿԳՆ Մխիթար Սեբաստացի կրթահամալիր ՊՈԱԿ-ի Խաղարկային դատարանը, սույն թվականի նոյեմբերի 23-ին, գործով վարույթ է ընդունել նույն կրթահամալիրի սովորող Տիգրան Աբրահամյանի հայցն ընդդեմ ծրագրի ղեկավարների:

Դատարանը, հիմնվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, ՀՀ ԿԳՆ Մխիթար Սեբաստացի կրթահամալիր ՊՈԱԿ-ի Խաղարկային դատարանի աշխատակարգի համապատասխան դրույթների վրա՝ պատասխանողներ ճանաչել Կրթահամալիրի խորհրդին՝ ի դեմս Խորհրդի նախագահ Արամազդ Ղալամբարյանի, կրթահամալիրի միջին դպրոցի ղեկավար Մարիետ Միմոնյանին, Կրթահամալիրի Ավագ դպրոց վարժարանի ղեկավար Գևորգ Հակոբյանին, Գեղարվեստի ավագ դպրոցի ղեկավար Գրիգոր Խաչատրյանին, Արհեստագործական ավագ դպրոցի ղեկավար Արտյոմ Խաչատրյանին: Բացի Կրթահամալիրի Խորհրդի նախագահից, գործում ներառված բոլոր անձիք, Խաղարկային դատարանի աշխատակարգի համաձայն պատշաճ տեղեկացվել են: Հայցվոր Տ. Աբրահամյանին խորհրդատու է նշանակվել Ա. Տիգրանյանը: Անցնող ժամանակահատվածում, հայցվորը որոշակի փոփոխության է ենթարկել հայցը, որ բխում է ՀՀ Քաղաքացիական դատավարությունների մասին օրենքով նրան ընձեռած հնարավորություններով: Ըստ այդմ, գործի մեջ է ներառվել նաև Կրթահամալիրի խորհուրդը:

Հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, դատարանը որոշեց.

Առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2, 3 և 6 հոդվածներով, Կրթահամալիրի Խաղարկային դատարանի աշխատակարգով, Դպրոցների ղեկավարանների մասով քննությունն սկսել այս շաբաթ՝ դեկտեմբերի 8-ից: Դատավարության օրը և ժամը լրացուցիչ կներկայացվի հայցվոր և պատասխանող կողմերին:

Առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքով, Կրթահամալիրի Խաղարկային դատարանի աշխատակարգով, ՀՀ Հանրակրթության մասին օրենքի հոդված 11-ով, Կրթահամալիրի խորհրդին, ի դեմս նախագահ Արամազդ Ղալամբարյանի, տալ երկշաբաթյա ողջամիտ ժամանակ հայցին պատասխանելու և պատրաստվելու համար: